ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 28-ից հոկտեմբերի 31-ը ամենամյա «Միջազգային մաքսային ֆորում – 2024-ին» մասնակցելու նպատակով ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Կարեն Թամազյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ,

Գարիկ Մինասյան - Էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության պետ,

Աղասի Աղայան - Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետի տեղակալ,

Օհաննա Գառգալոյան - միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ (հոկտեմբերի 28-ից 30-ը),

Արփինե Գրիգորյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2024 թվականի հոկտեմբերի 28-31-ը

3. Հրավիրող կողմը՝

ՌԴ Դաշնային մաքսային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ֆորումը համարվում է միջազգային մակարդակով ԵԱՏՄ շրջանակներում մաքսային թեմատիկայով ամենախոշոր միջոցառումներից մեկը, որը հնարավորություն է տալիս մաքսային ծառայությունների ներկայացուցիչներին, պետական մարմիններին, գործարար միջավայրին ևս մեկ անգամ ծանոթանալու մաքսային բնագավառում նոր ձեռքբերումներին, մասնագիտացված փորձի փոխանակմանը, ամրապնդել գործընկերական հարաբերությունները և ներդրում ունենալ միջազգային մաքսային բնագավառում հետագա զարգացման համար:

Ֆորումի շրջանակներում տեղի է ունեցել մասնակից պետությունների մաքսային ծառայությունների շնորհանդեսների ցուցադրություն, բաց քննարկման հարթակների կազմակերպում և ցուցահանդեսային տաղավարների ցուցադրում՝ ըստ անդամ պետությունների: Ֆորումի շրջանակներում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պետական

եկամուտների կոմիտեն ներկայացել է վերջին ժամանակաշրջանում մաքսային ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբեյալ տեսանյութ:

5. **Քննարկված թեմաները՝**

Ֆորումի գործնական մասում ներառված են 12 միջոցառումներ, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին, այդ թվում նաև՝ արտաքին տնտեսական գործունեության թվայնացմանը, տրանսպորտային լոգիստիկ միջանցքների զարգացմանը, էլեկտրոնային առևտրի զարգացմանը, լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտին, ռիսկերի կառավարման համակարգին և այլ հարցերի:

6.**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Ֆորումի շրջանակներում հոկտեմբերի 29-ին երկկողմ հանդիպում է տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Կարեն Թամազյանի և Կուբայի Հանրապետության մաքսային ծառայության ղեկավարի առաջին տեղակալ Վիլյամ Պերես Գոնսալեսի միջև: Քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կուբայի Հանրապետության կառավարության միջև մաքսային օրենսդրության պատշաճ կիրառման և մաքսային ոլորտում իրավախախտումների կանխարգելման, քննության և դրանց դեմ պայքարի հարցերով փոխադարձ վարչական օգնության մասին» համաձայնագրի նախագծի ներպետական համաձայնեցման ընթացքը, ապրանքաշրջանառության ծավալների բարձրացմանն ուղղված միջոցառումները, երկու երկրների մաքսային ծառայությունների միջև համագործակցությունն ամրապնդելու քայլերը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Գործուղումը տեղի է ունեցել նիստերի և կլոր սեղանների ձևաչափով, ինչով պայմանավորված փաստաթղթեր չեն ստորագրվել, որոշումներ չեն կայացվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտի, էլեկտրոնային առևտրի զարգացման, ռիսկերի կառավարման համակարգի, բացթողնման ժամանակի կրճատման վերաբերյալ թեմաների քննարկման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել տվյալ հարցերը բարձրացնել նաև ԱՊՀ և ԵԱՏՄ համապատասխան հարթակներում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Կարեն Թամազյան

Գարիկ Մինասյան

Աղասի Աղայան

Օհաննա Գառգալոյան

Արփինե Գրիգորյան

01/11/2024թ.